Պաշտոնական կարծիք

Ալեքսանդր Սերգեյի Կոչուբաևի

«Բնական իրավունքի հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան. պատմական և արդիական տեսանկյուններ» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող թենածուական ատենախոսությունը նվիրված է բնական իրավունքի տեսության պատմաիրավական ուսումնասիրությանը:

Թեկնածուական ատենախոսական աշխատանքի հետազոտության թեման խիստ արդիական է իր տեսական և գործնական առումով: Տեսական առումով նրա պատմական նշանակությունը կայանում է նրանում, որ բնական իրավունքը որոշակի ուղենիշ է հանդիսացել և հանդիսանում պոզիտիվ իրավունքի կատարելագործման և զարգացման համար: Բնական իրավունքը որպես իդեալական իրավունք գործնական առումով կոչված է ապահովելու մարդու պոզիտիվ իրավունքների իրականացումը արդարության պահանջներին համապատասխան:

Աշխատանքի հեղինակը հիմնվելով աղբյուրների և տեսական գրականության քննական վերլուծության արդյունքների վրա, պատշաճ գիտական մակարդակով կարողացել է բացահայտել թեմայի իմաստն ու բովանդակությունը: Բացի դրանից, աշխատանքում ձևակերպված խնդիրները հեղինակը լուծել է լիարժեքորեն, իսկ ստացված արդյունքները աչքի են ընկնում իրենց օբյեկտիվությամբ և հավաստիությամբ:

Գրախոսվող աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակը ցուցաբերել է նորովի մոտեցում բնական իրավունքի տեսության էական կողմերի և էվոլյուցիոն զարգացման շղթայի բացահայտման ոլորտում, ինչպես նաև հիմնախնդրի պատմատեսական և գործնական-կիրառական խնդրահարույց հարցերի գիտական պարզաբանումների առումով:

Հեղինակը բացահայտել է նաև բնական իրավունքի տեսության առանձին մոտեցումների գաղափարափիլիսոփայական հիմքերը, ընդգծել է դրանց ընդհանրությունները և առանձնահատկությունները, դոկտրինալ կիրառական

նշանակությունը պոզիտիվ իրավունքի (օրենսդրության) կատարելագործման ուղղությամբ:

Ելնելով համալիր վերլուծության արդյունքներից, ատենախոսության հեղինակը իրականացրել է բնաիրավական կատեգորիաների համակարգում, ինչպես նաև բնական իրավունքի տեսության գիտական հասկացութային ապարատի մշակում:

Հեղինակը նաև հանգամանալից վերլուծության է ենթարկել բնական իրավունքի դրույթների տրանսֆորմացիան ազգային օրենսդրության համակարգում:

Հեղինակն իրավացիորեն գտնում է, որ բնաիրավական տեսության գնահատողական գործառույթի իրացման հիմնական ոլորտը իրավաստեղծումն, որի ընթացքում պոզիտիվացվում են բնական իրավունքի հիմնադրույթները, հատկապես մարդու իրավունքների իրավակարգավորումների ոլորտում:

Քննարկվող հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ հետազոտության ստացված արդյունքները հարստացնում են մեր գիտելիքները իրավունքի տեսության խնդրո բաժնի վերաբերյալ, բնական իրավունքի հայեցակարգերի ճիշտ ըմբռնման, դրանց փոխհարաբերակցությունը պոզիտիվ իրավունքի հետ:

Գրախոսվող աշխատանքի գործնական-կիրառական նշանակությունը, ամենից առաջ, պայմանավորված է օրենսդրության կատարելագործմամբ և պոզիտիվ իրավունքի արդյունավետ կիրառմամբ՝ բնական իրավունքի տեսանկյունից:

Դրական գնահատելով կատարված աշխատանքը, ունենք որոշակի նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

Առաջին, հեղինակը խոսելով բնական իրավունքի ընդհանուր տեսության վերաբերյալ, անհրաժեշտ էր կանգ առնել նաև այդ տեսության առանձին դրսևորումների վրա (օրինակ՝ իդեալական իրավունք, աստվածային իրավունք, բանական իրավունք, վերպոզիտիվ իրավունք, չգրված իրավունք, վերացական իրավունք և այլն), բացահայտել դրանց հիմնական առանձնահատկությունները և ընդհանրությունները, յուրաքանչյուրի կապը պոզիտիվ իրավունքի և իրավաըմբռնման հետ:

Երկրորդ, մեր կարծիքով, նպատակահարմար էր դիտարկել բնական իրավունքի հիմնադրույթների տրանսֆորմացիայի խնդիրը նոր սահմանադրական փոփոխությունների համատեքստում:

Սակայն նշված նկատառումները կրում են մասնակի բնույթ և բնավ չեն կարող ազդել ատենախոսության դրական արժանիքների վրա:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի մենագրություններում և գիտական հոդվածներում:

Սեղմագրում լիարժեքորեն է արտացոլված ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Աշխատանքի մասնագիտական թվանիշը համապատասխանում է «Պետության և իրավական տեսության և պատմության, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությանը:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում ենք, որ ԺԲ.00.01 «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Ալեքսանդր Սերգեյի Կոչուբաևի ««Բնական իրավունքի հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան. պատմական և արդիական տեսանկյուններ» թեմայով թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ամբողջական և ավարտուն հետազոտություն է, այն լիովին բավարարում է նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Իրավաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ **Լ.Մ. Մալխասյան**

Դոցենտ Լիանա Մալխասի Մալխասյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Երևանի Հայբուսակ համալսարանի գիտական քարտուղար՝
Տիգրան Պետրոսյան